մանակները զարդարուած է եղել մեծ շուքով: Վանական կեանքն էլ, ըստ երեւոյթին, այնչափ անյուսօրէն ձանձրալի չէ եղած, որչափ ներկայիս: Ժամանակի կաթողիկոսն ի պատիւ պ. Tavernier*-ի եւ նրա ուղեկիցների — քարաւանի քրիստոնեայ վաճառականների — հրամայել է կազմակերպել ցլամարտ...* T.*-ը էջմիածինը դրախտի պատկերով է ներկայացնում: Բայց, Աստուած իմ, ի՞նչպէս այդ ամէնը չէ համապատասխանում այժմու պատկերին... Եւ յետոյ, վանքի ոչ ներքինը եւ ոչ էլ արտաքինը կրում է ոեւէ հետք այն շուքից ու պայծառայութիւնից, որի մասին այնչափ գովքով են խօսում այդ հին ճամբորդները: Կաթողիկոսի սենեակներն էլ պարզ են ու կրում են հին շուքի թոյլ հետքերը միայն»:*

Վագներ իր կողմից եւս տալիս է վանքի ներքին եւ արտաքին համառօտ նկարագրութիւնը: Ընդհանուր տպաւորութիւնը, նաեւ ճարտարապետութեան տեսակէտից, շատ աւելի աննպաստ է՝ քան Գայիանէի եւ Հռիփսիմէի վանքերինը: Էջմիածնի միաբանների թիւը Շուրտէն հաշուել է 12–15 *(իսկական միաբաններ), թէեւ վանքը յարմարեցուած է եղել* 80 *հոգու համար: Դիւբուան հաշւում է* 50*: Վագների օրով այդ թիւը եղել է, համաձայն տեղապահ Բարսեղ արքեպիսկոպոսի տուեալների,* 90*: Վերջինիս մէջ մտնելիս են եղել* ժառանգաւորաց Վարժարանի *սաները եւս:*

Վագներին թոյլ է տրւում, թէեւ ոչ սիրով, ներկայ գտնուելու վարժարանի դասերին: Նրա խնդրով՝ Աբովեանը *սաներին քննում է մի քանի առարկաներից, որից եւ երեւում է աշակերտների «սարսափելի տգիտութիւնը»:*

Այսպէս, ամենաաւագ աշակերտն անգամ չէ կարողանում ռուսերէն «մայր» բառը հոլովել: Բանից դուրս է գալիս, որ ռուսերէնի վարդապետ-ուսուցիչն իսկ ծանօթ չէ ռուսերէնի հոլովումներին: Աւելին դեռ. սաներից եւ ոչ ոք չէ կարողացել ճիշդ պատասխանը տալ այն հարցին թէ... տարին քանի՞ օր ունի, «հակառակ որ նրանցից մի քանիսը արդէն բեղոտ էին: Եւ այսպիսիներից են դուրս գալիս ողջ Հայաստանի արքեպիսկոպոսները»:

Նման տգիտութիւն նաեւ միւս առարկաների մէջ: Սաների ստացած ամբողջ գիտութիւնը եղել է՝ մեքենայպէս աղօթքներ անգիր սովորել, նոյն ձեւով էլ Ս. Գիրք կարդալ, ծիսակատարութեանց վարժուիլ, պաս պահել, եւայլն: Ու գերման ճամբորդը «նողկանքով» է ոտքը դուրս դնում վարժարանից:

Մի խօսքով, Վագների տպաւորութիւնն այն է եղել, որ էջմիածնի ժառանգաւորաց Վարժարանում բթամտութիւնն է իշխողը: Դպրոցի սաների, անգամ դպիրների հետ «բարբարոս խստութեամբ» են վարուելիս եղել: Փոքրիկ զանցառութեանց համար իսկ աշակերտներին ոտկալի ծեծի են ենթարկել միշտ: Վագներ ստացել է այն տպաւորութիւնը, թէ «պահքը խախտելը Հայաստանում ամենամեծ մեղքն է համարւում, մինչ խաբեբայութիւնը եւ գողութիւնը այս ժողովուրդի աչքում աննշան բաներ են»:

Վանականների բաղդատութեամբ՝ Վագներ «բախտաւոր» է համարում հայ քահանաների դասի պատկերը, քանի որ դրանք ժողովրդի մէջ են մեծանում եւ ապրում: Թէեւ քահանաները զուրկ են մինչեւ իսկ վանականների «գիտութիւնից», յաճախ գրել-կարդալ իսկ չգիտեն, բայց դրա փոխարէն գոնէ մարդկային աւելի առողջ «միտքի տէր են քան վանականները»:

Էջմիածնի տարեկան եկամուտը *Վագներ իր այցելութեան միջոցին հաշւում է, «վստահելի տուեալների հիման վրայ», հազիւ* 16 *հազար րուբլի: Եկամուտի գլխաւոր աղբիւրները եղել են՝ վանքի կալուածները, Երեւանի եւ Թիֆլիսի վանապատկան կրպակները եւ ուխտաւորների նուէրները:*

Էջմիածին այցելող ամէն մի ճամբորդի հետաքրքրութեան առաջին առարկաներից մէկը է՛ն գլխից եղել է վանքի գրչագիրների ժողովածուն:

«Հին ճամբորդները,— ասում է Վագներ,— էջմիածնի ձեռագիրների թիւը հաշւում են 30,000, Eugen Bore'*-ն* 5–6000, *որ դարձեալ խիստ չափազանցուած է... Իմ հաշւով նրանց թիւը մօտ* 2000 *պիտի լինի, յամենայն դէպս՝ ո՛չ աւելի պակաս»:*

Վանքի ձեռագրատուն-մատենադարանը Վագներ գտնում է ողորմելի, խառնիխուռն վիճակի մէջ: Անգամ գրադարանապետ-վար-